Տ. ՇԱՀԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 մարտի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Լսեցե՛ք, թե ինչ էր ասում անիրաւ դատաւորը»
(Ղուկ. ԺԸ. 6):

Սիրելի՛ հաւատացյալ քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր ամենքս դեպի Զատիկ մեր ճամփորդության ընթացքում հասել ենք Մեծի Պահոց հինգերորդ հանգրվանին, որը սովորաբար մեր Եկեղեցու ավանդության մեջ անվանում ենք «Դատաւորի կիրակի» կամ «Անիրաւ Դատաւորի կիրակի»: Այս կիրակիի ողջ խորհուրդը կենտրոնանում է մի շատ կարեւոր դրվագի վրա, երբ Հիսուս դեպի Երուսաղեմ ճանապարհին վերջին անգամ իր աշակերտներին պատմեց առակ, թե ինչպես պետք է աղոթել եւ սպասել երկրորդ գալստյանը: Բնականաբար, այս դրվագն իր հիմնական պատգամով՝ իբրեւ Մեծ Պահքի խորհրդածություն, շատ մեծ խորհրդաբանություն ունի:

Ավետարանը պատմում է, որ Քրիստոս ճամփա էր ընկել դեպի Երուսաղեմ. ողջ ճանապարհին Աստծո Որդին պատմում է առակներ, որոնց խորքն ու պատգամը Մեծ Պահքի շրջայում երեք հիմնական առակներով է դասավորված՝ Անառակ որդու, Անիրաւ տնտեսի եւ Անիրաւ դատաւորի:

Ինչպես մեկնիչներից մեկը դիպուկ նկատել է, այս երեք առակները երեք բառերում են խտացվում՝ «կորեա՛», «փրկեա՛», «ողորմեա՛»: Այսինքն՝ «...կորսվեցի, փրկի՛ր, ողորմի՛ր»: Սա վերջին պատմությունն է այն մասին, թե ինչպես կյանքի դժվարությունների, դժբախտությունների, հոգեկան զանազան տագնապների մեջ կարող ենք ինքներս մեզ իբրեւ Աստծո որդիներ զգալ, մեզ նույնացնել Ավետարանում «Երանիների» առաջին տողի հետ. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ Ե. 3): Այս առակը մի հրաշալի առիթ է, որ մեզ նույնացնենք այն հոգով աղքատների հետ, որոնք պիտի տեսնեն Աստծո արքայությունը:

Ավետարանը նկարագրում է, որ մի այրի կին կար: Նա եկավ անիրաւ դատաւորի մոտ, որը ո՛չ մարդկանցից էր ամաչում, ո՛չ Աստծուց վախենում. այս

կինն անընդհատ, թերեւս տարիներ շարունակ, խնդրում էր այս անիրավ դատավորից, որը շատ հայտնի էր իբրեւ կաշառակեր, իր ոսոխի դեմ դատ տեսնել եւ արդար վճիռ կայացնել: Դատավորը, արդեն ձանձրացած այս կնոջ պաղատանքներից, ասում է. «Թեեւ Աստծուց չեմ վախենում եւ մարդկանցից չեմ ամաչում, բայց որ այս կինն ինձ այլեւս չձանձրացնի, նրա դատը տեսնեմ, թերեւս թողնի, գնա» (հմմտ. Ղուկ. ԺԸ. 4-5): Այդպես էլ լինում է: Եւ ահա Հիսուս ընդգծում է. «Լսեցե՛ք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը»:

Առակի ողջ իմաստը դատավորի խոսքի մեջ է: Դատավորները տվյալ ժամանակաշրջանի հասարակության մեջ (թերեւս նաեւ այսօր) կարող էին մարդկանց կյանքը, ճակատագիրը փոխել գրչի մեկ հարվածով: Իսկ այրիները, որոնք զրկված էին տղամարդու օգնությունից, իրենց հանապազօրյա հացը վաստակում էին կա՛մ մուրացկանությամբ, կա՛մ ամուսնու եւ որդիների թողած նյութական միջոցներով: Ուստի, առակում ներկայացվում են երկու շատ կարեւոր՝ իրար հակադիր կերպարներ: Մեկը, որ բացարձակ իշխանություն ունի անելու ինչ կամենում է, եւ մյուսը՝ բացարձակապես զուրկ իշխանությունից: Քրիստոս երեք առակում էլ Աստծուն ուղղակիորեն հակադրում է այս բացարձակ իշխանություն ունեցողներին. դեմ հանդիման է դնում նրանց եւ ասում. «Նայե՛ք, այս մարդիկ, որ աշխարհում, այս հասարակության մեջ ունեն բացարձակ իշխանություն, կարող են երբեմն իրենց պատվի, նկարագրի կամ պարզապես իրենց անձը «պաշտպանելու» համար ակամա բարի գործ անել, որքա՞ն առավել եւս Աստված, որ բարություն անելը, բարիք գործելը հենց Նրա բնությունն է՝ մեղավորին, որբին, այրիին եւ բոլոր այն մարդկանց, որոնք Իր կարիքն ունեն, առատապես բաշխելու է աստվածային շնորհն ու օգնությունը»: Ահա այս հակադրության մեջ է, որ Քրիստոս ասում է. «Լսեցե՛ք, թե դատավորն ինչ էր ասում», քանզի դուք ամեն օր ձեր աչքի առաջ ունեք այդ կերպարները, այն մարդկանց, որոնք բախտի բերմամբ, կամ միգուցե գործված հանցանքներով աստիճանաբար բարձրացել են հասարակության ամենավերին գագաթը եւ այսօր մեզ համար շատ հաճախ գայթակղության առիթ են: Բայց փորձենք մի պահ նրանց հակադրել Աստծուն, եւ ահա կատարյալ մի օրինակ, թե ինչպես պետք է պատգամ քաղել այդ հակադրությունից: Առակի առաջին իմաստն այս է:

Երկրորդ շատ կարեւոր իմաստը, որ առակի առաջին բառերի մեջ է, այն է, թե ինչպես պետք է աղոթել, հարատեւել աղոթքի մեջ: Հոգեւոր կյանք սկսողները սովորաբար կարծում են, թե իրենց սրտաբուխ առաջին աղոթքը լավ ստացվեց, ուրեմն իրենց հոգեւոր ճանապարհը մինչեւ վերջ ընթանալու է հարթ ու խաղաղ: Բայց նրանք, որոնք քիչ թե շատ փորձառություն ունեն թե՛ կյանքում եւ թե՛ հոգեւոր կյանքում առհասարակ, կփաստեն, որ դա միայն առաջին տպավորությունն է: Ամենադժվարը հարատեւելն է հոգեւոր ծառայության, հոգեւոր կոչման ու հարատեւ աղոթելու մեջ: Մեզ համար ծանր է տեսնել դատապարտելի արարք մանավանդ սրբության չափանիշ հանդիսացող մարդկանցից. երբեմն դժվար է

չգայթակղվել ու հարատեւել աղոթքի մեջ... Եւ պատահական չէ, որ Քրիստոս դատավորի օրինակն է բերում, քանզի օրենքի համաձայն՝ դատավորը կրում էր ժառանգությունը Մովսեսի, Սամուելի եւ մնացյալ բոլոր մեծ մարգարեների, որոնք Աստծու Հոգով մարդկանց համար արդարություն էին գործում: Բայց ահա այս դատավորը վարվում է այնպես, ինչպես ինքն է կամենում՝ իր ես-ի, սեփական շահի համաձայն: Սակայն այրի կինը դրանից չի հուսահատվում, այլ շարունակում է հայցը, հարատեւում իր խնդրանքի մեջ:

Հետեւաբար, Մեծ Պահքի այս շրջանում, Քրիստոսի Գալստյան կիրակին նախորդող առակով, որը կարծես թե իր խորհրդով նախանշում է զալուստը, Փրկիչը շեշտում է աղոթքի հարատեւության կարեւորությունը:

Սովորաբար դժվարանում ենք սահմանել, թե ինչ է աղոթքը, կարող ենք միայն տեսական որոշ բանաձեւումներ տալ՝ մեր փորձառությունից ելնելով, բայց ինչպես Քրիստոս է նշում Նոր Կտակարանում, ամեն մարդ ինքն է Աստծուն Աբբա՛, Հա՛յր, անվանում (հմմտ. Մարկ. ԺԴ. 36): Յուրաքանչյուր մարդու համար Աստված հայրական բացարձակ սիրո եւ խնամքի մարմնավորումն է. ամեն մարդ յուրովի է պատկերացնում հոր կերպարը, հետեւաբար յուրովի է աղոթում երկնային Հորը:

Այս առակը վերջին հանգրվանն է՝ մեր հոգեւոր աղքատությունը գիտակցելու, այդ պատճառով Աստծուց մշտապես ներում հայցելու, այդ աղքատության գիտակցումով հարատեւելու, որպեսզի Գալստյան կիրակիով կարողանանք ունենալ այն ներքին հոգեվիճակը, որով կկարողանանք դիմավորել մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Առակի վերջին պատգամը Տերն Ինքն է ձեւակերպում. «Իսկ Աստված արդարություն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք գիշեր եւ ցերեկ աղաղակում են. եւ նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի» (Ղուկ. ԺԸ. 6-7)... Անշուշտ, ո՛չ: Աստված մշտապես լսում է մեր աղոթքները, որոնք Հակոբ նահապետի տեսած սանդուղքի աներեւույթ ատիճաններով բարձրանում են դեպի Նա: Բայց այդ աղոթքներն ինչպե՞ս կիրագործվեն, մեզ հասանելի կամ անհասանելի ի՞նչ ճանապարհներով մեր կյանքում իրականություն կդառնան... Ահա սա մեզ համար մնում է խորհուրդ, զորեղ գիտակցում, որ մեր Հայրն Ինքը կարող է տնօրինել, քանի որ ավելի լավ գիտի, թե մեզ ինչ է անհրաժեշտ:

Դժվար է այս ամենը փաստել կյանքում, առավել եւս՝ ապացուցել. մարդիկ, որոնք անկեղծ սիրով, անկեղծ հավատով աղոթք են բարձրացնում, հաճախ կյանքում չեն զգում աղոթքների իրականացումը: Նրանց համար դժվար է փաստել, որ այդ աղոթքը միգուցե իրականացել է, սակայն ինքը՝ աղոթողը տեղյակ չէ կամ դեռեւս հասու չէ: Հենց այստեղ է, որ բացարձակ վստահությունն Աստծո խոսքի, Նրա սիրո հանդեպ դառնում է մեզ համար էական ու շատ կարեւոր: Մենք Տիրոջ հետ շփվում ենք իբրեւ մեկի, Ով մեզանից լավ գիտի մեր պահանջները, քննում է մեր սրտերն ու հոգիները:

Աղոթե՛ք, անընդհատ Աստծուն աղաղակե՛ք, եւ թողեք, որ Նա որոշի ձեր մատուցած աղոթքի կարեւորությունը ձեր կյանքում: Եթե իմանայինք, թե մեր աղոթքն ինչ չափով է կարեւոր մեզ համար, ինչպիսի հարցեր կլուծի մեր կյանքում, ապա մեր հարաբերություններն Աստծո հետ պարզ առեւտրից անդին չէին անցնի: Սակայն Քրիստոսի ներկայացրած Աբբան՝ երկնավոր Հայրը, այն բացարձակ, բարեգութ հայրն է, որ խնամում է մեզ մեր իմացածից էլ ավելին, ուրեմն առավել եւս պետք է վստահենք Նրան, որ Գալստյան կիրակիին՝ Քրիստոսի վերջին գալուստի խորհուրդը մատնանշող օրը կարողանանք հանգիստ խղճով՝ իբրեւ հոգով աղքատ, տեսնելու Աստծո արքայությունը: Եկե՛ք, սիրելինե՛ր, մեզ հանձնենք Աստծո ձեռքը եւ ասենք. «Ով Տե՛ր, որ գիտես մեր պետքերը մեզանից ավելի, հոգ տար, պատրաստիր դրանք եւ քո իմացածով ու քո անսահման իմաստությամբ դրանք իրականություն դարձրու մեր կյանքում». այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: